

**AGREEMENT**  
**BETWEEN**  
**THE GOVERNMENT OF THE UNITED STATES OF AMERICA**  
**AND**  
**THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**ON**  
**THE PROTECTION AND PRESERVATION**  
**OF CERTAIN CULTURAL PROPERTIES**

The Government of the United States of America and the Government of the Republic of Armenia, (hereafter referred to as Parties)

*Desirous* of successful mutual cooperation in the field of cultural heritage,

*Convinced* that such an agreement will contribute to the strengthening of numerous contacts between the two states,

*Bearing* in mind the respect due to fundamental human rights, and seeking to promote understanding, tolerance and friendship among all nations, racial and religious groups,

*Convinced* that each culture has a dignity and a value which must be respected and preserved, and that all cultures form part of the common heritage belonging to all mankind,

*Desiring* to enhance the protection of cultural heritage and provide access to treasures of national and world culture without discrimination,

*Considering* that deterioration or disappearance of items of the cultural heritage constitutes an impoverishment of the heritage of all the nations of the world,

*Considering* that the protection of cultural heritage can be effective only if organized both nationally and internationally among states working in close cooperation,

*Considering* the principles of the Helsinki Final Act of the Conference on Security and Cooperation in Europe, and

*Desirous* of elaborating concrete steps in furtherance of the principles of the 1972 Convention for the Protection of the World Cultural and Natural Heritage with respect to certain items of cultural heritage of the victims of genocide,

*Have agreed as follows:*

#### ARTICLE 1

Each party will take appropriate steps to protect and preserve the cultural heritage of all national, religious, or ethnic groups (hereafter to as "groups") that reside or resided in its territory, including victims of genocide during the Second World War.

The term "cultural heritage" for the purposes of this Agreement means places of worship, sites of historical significance, monuments, cemeteries, and memorials to the dead as well as archival materials relating thereto.

#### ARTICLE 2

The Parties shall cooperate in identifying a list of appropriate items, which fall within the scope of Article 1, particularly those which are in danger of deterioration or destruction.

#### ARTICLE 3

Each Party will ensure that there is no discrimination, in form or in fact, against the cultural heritage of any group referred to in Article 1 or against the nationals of the other Party in the scope and application of its laws and regulations concerning:

- (a) the protection and preservation of their cultural heritage;
- (b) the right to contribute to the protection and preservation of their cultural heritage; and
- (c) public access thereto.

#### ARTICLE 4

In cases where a group concerned, referred to in Article 1, is unable, on its own, to ensure adequate protection and preservation of its cultural heritage, each Party shall take special steps to ensure such protection and preservation of cultural heritage within its territory and shall invite the cooperation of the other Party and its nationals where assistance is required for this purpose.

#### ARTICLE 5

Properties of cultural heritage, referred to in Article 4, that are of special significance shall be designated in a list of items of cultural heritage. Such a list shall be publicly announced and communicated to competent federal, state, and local authorities.

All properties of cultural heritage so designated shall be protected, preserved, and marked in the manner stipulated by legal internal regulation of either Party. Public access thereto shall be ensured.

Such a list of items of cultural heritage shall be designated by the Commission referred to in Article 6 hereof. The Commission may also designate properties for inclusion in the list at any time.

#### ARTICLE 6

For the purpose of overseeing the implementation of the Agreement, the Parties shall establish a Joint Commission (JC). The sessions of the JC shall be held periodically on terms agreed upon in advance and alternately in the United States of America and the Republic of Armenia, each of which shall appoint one or more representatives to the JC, who may be assisted by alternates and advisers.

The United States Commission for the Preservation of America's Heritage Abroad shall be the Executive Agent for implementing this Agreement on the American side. The Ministry of Culture and Youth Affairs of the Republic of Armenia shall be the Executive Agent for implementing this Agreement on the Armenian side. Either Party may, by diplomatic note to the other, change its Executive Agent.

#### ARTICLE 7

Nothing in this Agreement shall be construed to relieve either Party of its obligations under the 1972 Convention for the Protection of the World Cultural and Natural Heritage or any other agreement for the protection of cultural heritage.

#### ARTICLE 8

This Agreement shall be implemented in accordance with the laws and regulations of both countries and the availability of funds.

#### ARTICLE 9

Disputes concerning the interpretation or application of this Agreement shall be resolved by mutual consent of the competent authorities of the Parties.

#### ARTICLE 10

The parties may, by mutual consent, make amendments and supplements to this Agreement, which shall be concluded by separate protocols, which are an integral part of this Agreement.

Such protocol shall enter into force in accordance with the procedures provided for the entry into force of this Agreement.


**ARTICLE 11**

This Agreement shall enter into force upon an exchange of diplomatic notes by which the Parties inform each other about the fulfillment of their respective legal requirements for entry into force.

This Agreement shall remain into force until terminated by either Party giving six months prior written notice through diplomatic channels to the other Party of its intention to terminate this Agreement.

DONE at Washington on this 25<sup>th</sup> day of May 2004,  
in two original copies, each of them the English and Armenian languages. All texts  
are equally authentic.

**FOR THE GOVERNMENT OF  
THE UNITED STATES OF AMERICA:**



**FOR THE GOVERNMENT OF  
THE REPUBLIC OF ARMENIA:**



**AGREEMENT IN ARMENIAN**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև որոշակի մշակութային արժեքների պաշտպանության և պահպանության մասին

Ամերիկայի Միացյալ Նահանգներին Կառավարությունը և Հայաստանի  
Հանրապետության Կառավարությունը /այսուհետ՝ Կողմեր/,

ձգտելով մշակութային ժառանգության բնագավառում հաջող  
համագործակցության,

համոզված լինելով, որ մասն համաձայնագիրը կնպաստի երկու  
պետությունների միջև բազմաթիվ շփումների ամրապնդմանը,

նկատի ունենալով հարգանքը մարդու հիմնարար իրավունքների  
նկատմամբ և ձգտելով խրախուսել բոլոր ազգերի, ռասայական և կրոնական  
խմբերի միջև փոխըմբռնումը, հանդուրժողականությունն ու բարեկամությունը,

համոզված լինելով, որ յուրաքանչյուր մշակույթ ունի արժեք, որը պետք է  
հարգվի ու պահպանվի և որ բոլոր մշակույթները ողջ մարդկությանը  
պատկանող ընդհանուր ժառանգության մաս են կազմում,

ցանկանալով բարձրացնել մշակութային ժառանգության  
պաշտպանվածությունը և ապահովել, առանց խտրականության, ազգային և  
համաշխարհային մշակութային հարստության մատչելիությունը,

հաշվի առնելով, որ մշակութային ժառանգության առարկաների  
քայքայվելն ու անհետանալը հանգեցնում են աշխարհի բոլոր ազգերի  
ժառանգության աղքատացման,

հաշվի առնելով, որ մշակութային ժառանգության պահպանությունը  
կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ իրականացվում է թե  
ազգային, թե միջազգային մակարդակով, պետությունների միջև սերտ  
համագործակցությամբ,

նկատի ունենալով Եվրոպայի անվտանգության և համագործակցության  
խորհրդատվական Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների վրա և

ձգտելով գործնական քայլեր մշակել ցեղասպանության զոհերի  
մշակութային ժառանգության որոշակի օբյեկտների առնչվող՝ 1972 թվականի  
Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պաշտպանության  
մասին կոնվենցիայի սկզբունքների և նպատակների իրականացման  
ուղղությամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

#### Հոդված 1

Յուրաքանչյուր Կողմ համապատասխան քայլեր կձեռնարկի՝ պաշտպանելու և պահպանելու բոլոր ազգային, կրոնական կամ էթնիկ խմբերի /այսուհետ՝ խմբեր/ մշակութային ժառանգությունը, որոնք բնակվում կամ բնակվել են իր պետության տարածքում, ներառյալ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ցեղասպանության զոհերին:

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ «մշակութային ժառանգություն» նշանակում է՝ պաշտամունքի վայրեր, պատմական մշակութային ունեցող վայրեր, հուշարձաններ, գերեզմանոցներ, մահարձաններ, ինչպես նաև դրանց վերաբերող արխիվային նյութեր:

#### Հոդված 2

Կողմերը կհամագործակցեն 1-ին հոդվածում նշված համապատասխան մշակութային ժառանգության օբյեկտների ցուցակի նախապատրաստման գործում, մասնավորապես, այն առարկաների, որոնք քայքայման կամ կործանման վտանգի տակ են:

#### Հոդված 3

Յուրաքանչյուր Կողմ կերաշխավորի որևէ փաստացի կամ ձևական խտրականության բացառումը 1-ին հոդվածում նշված որևէ խմբի մշակութային ժառանգության կամ մյուս Կողմի քաղաքացիների նկատմամբ՝ այն օրենքներում և կանոնակարգերում ու դրանց կիրառման ընթացքում, որոնք վերաբերում են.

ա/ նրանց մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանությանը,

բ/ նրանց մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանությանը նպաստելու իրավունքին, և

գ/ դրանց՝ հանրության համար մատչելիությանը:

#### Հոդված 4

Այն դեպքերում, երբ 1-ին հոդվածում նշված որևէ խումբ ի վիճակի չէ ինքնուրույն ապահովելու իր մշակութային ժառանգության համապատասխան պաշտպանությունն ու պահպանությունը, յուրաքանչյուր Կողմ հատուկ քայլեր կձեռնարի իր պետության տարածքում գտնվող մշակութային ժառանգության պաշտպանությունն ու պահպանությունը ապահովելու համար և համագործակցության է հրավիրում մյուս Կողմին և նրա քաղաքացիներին, երբ այդ նպատակի համար աջակցություն է պահանջվում:

#### Հոդված 5

4-րդ հոդվածում նշվող՝ հատուկ նշանակություն ունեցող մշակութային ժառանգության արժեքները կնշվեն մշակութային ժառանգության օբյեկտների ցուցակում: Այդ ցուցակը կիրապարակվի և կներկայացվի իրավասու դաշնային (կենտրոնական), մահանգային (մարզային) և տեղական իշխանություններին:

Նման ձևով գրանցված բոլոր մշակութային ժառանգության արժեքները կպաշտպանվեն, կպահպանվեն և կնշագրվեն՝ համաձայն համապատասխան Կողմի՝ գործող ներքին կանոնակարգերի: Դրանց նկատմամբ հանրության համար մատչելիությունը կերաշխավորվի:

Մշակութային ժառանգության օբյեկտների ցուցակը կկազմվի 6-րդ հոդվածում նշված Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը կարող է ցանկացած ժամանակ լրացնել ցուցակը այլ օբյեկտներով:

#### Հոդված 6

Սույն Համաձայնագրի գործնական իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն Համատեղ հանձնաժողով /ՀՀ/: Համատեղ հանձնաժողովի նիստերը Կողմերի միջև նախապես համաձայնեցված ժամկետներում պարբերաբար և հաջորդաբար կգումարվեն Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Հայաստանի Հանրապետությունում, որոնցից յուրաքանչյուրը կնշանակի Համատեղ հանձնաժողովում մեկ կամ մի քանի ներկայացուցիչ, որոնք կարող են ունենալ փոխարինողներ և խորհրդակցաններ:

Սույն Համաձայնագրի իրականացման համար ամերիկյան կողմից իրավասու մարմին է հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ արտասահմանում Ամերիկայի ժառանգության պաշտպանության հանձնաժողովը: Սույն Համաձայնագրի իրականացման համար հայկական կողմից իրավասու մարմին է հանդիսանում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ուղղված դիվանագիտական հայտագրի միջոցով կարող է փոխել իր իրավասու մարմնին:

#### Հոդված 7

Սույն Համաձայնագրի և ոչ մի դրույթ Կողմին չի ազատում 1972թ. Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայով կամ մշակութային ժառանգության պաշտպանության որևէ այլ համաձայնագրով նախատեսված պարտավորություններից:

#### Հոդված 8

Սույն Համաձայնագիրը կիրականացվի երկու երկրների օրենքներին ու կանոնակարգերին և առկա ֆինանսական միջոցներին համապատասխան:

#### Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը, փոխադարձ համաձայնությամբ, լուծում են Կողմերի իրավասու մարմինները:



Հոդված 10

Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Արձանագրությունը ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դիվանագիտական հայտագրերի փոխանակման պահից, որով Կողմերը միմյանց տեղեկացնում են ուժի մեջ մտնելու համար համապատասխան իրավական պահանջները կատարելու մասին:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում քանի դեռ չի դադարեցվել Կողմերից որևէ մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին 6 ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

Կատարված է Վաշինգտոն քաղաքում, 2004թ մայիսի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ  
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝

